ԱՂՈԹՔԻ ԵՎ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԳՈՐԾ. 13:1-4

*1 Անտիոքի եկեղեցում կային մի քանի մարգարեներ և ուսուցիչներ՝ Բառնաբասն ու Շմավոնը, որ Նիգեր էր կոչվում, Ղուկիոս Կյուրենացին, Մանայենը՝ Հերովդես չորրորդապետի ընկերը, և Սողոսը: 2 Երբ նրանք Տիրոջը պաշտամունք էին մատուցում և ծոմ էին պահում, **Սուրբ Հոգին ասաց**. Առանձնացրե՛ք ինձ համար Բառնաբասին ու Սողոսին այն գործի համար, որին ես կանչել եմ նրանց: 3 Այդ ժամանակ ծոմ պահելով ու աղոթելով՝ նրանց վրա ձեռք դրեցին և ուղարկեցին: 4 Եւ նորանք էլ Սուրբ Հոգուցն ուղարկուած՝ իջան Սելեւկիա, եւ այն տեղից նավով գնացին Կիպրոս:*

Գործք Առաքելոց 14:23 – Նրանց յուրաքանչյուր եկեղեցում երեցներ ձեռնադրեցին, աղոթեցին ծոմապհությամբ ու նրանց հանձնեցին Տիրոջը, որին հավատացել էին:

1. ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԵՆՔ ՇԱՏ ԶԳԱՅՈՒՆ ԵՆՔ ԴԱՌՆՈՒՄ ՀՈԳՈՒ ԲԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

Գործք Առաքելոց 16:6-7 – Եվ շրջեցին Փռյուգիայում ու գաղատացիների երկրում՝ արգելվելով Սուրբ Հոգուց, որ Ասիայում Աստծու խոսքը չքարոզեն: Երբ Մյուսիայի սահմանները եկան, ջանում էին դեպի Բյութանիա գնալ, բայց Հիսուսի Հոգին նրանց թույլ չտվեց:

9 Գիշերը Պողոսին տեսիլք երևաց. մի մակեդոնացի մարդ կանգնել, նրան աղաչում էր ու ասում. Անցի՛ր Մակեդոնիա և օգնի՛ր մեզ: 10 Երբ այդ տեսիլքը տեսավ, իսկույն ցանկացանք դեպի Մակեդոնիա ելնել՝ համոզված լինելով, որ Տերը մեզ հրավիրեց նրանց ավետարանելու:

2. ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐՈՒՄ Է ՀՈԳԵՒՈՐ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ:

*Հովնան 3:5-10 – 5 Եվ Նինվեի մարդիկ հավատացին Աստծուն և **ծոմ հայտարարեցին** ու մեծերից մինչև փոքրերը քուրձեր հագան: 6 Խոսքը հասավ Նինվեի թագավորին: Նա վեր կացավ իր գահից և իր վրայից հանեց պատմուճանը, քուրձ հագավ և նստեց մոխրի վրա: 7 Նինվեում հայտարարել տվեց, թագավորի ու նրա մեծամեծների անունից հրամայեց՝ ասելով. Մարդ և անասուն, արջառ և ոչխար թող ոչինչ չուտեն, չարածեն և ջուր չխմեն, այլ 8 մարդիկ ու անասուններ թող քուրձ հագնեն և բարձրագոչ աղաղակեն Աստծուն, և ամեն մարդ թող ետ դառնա իր չար ճանապարհից և իր ձեռքերի անիրավությունից: 9 Ո՞վ գիտե, գուցե Աստված ետ դառնա և զղջա ու մեղմացնի իր սաստիկ բարկությունը, և մենք չկորչենքե: 10 Եվ Աստված տեսավ նրանց գործերը, որ ետ դարձան իրենց չար ճանապարհից, **և Աստված զղջաց** այն չարիքի համար, որ ասել էր, թե պիտի անի նրանց. ու չարեց:*

- ***Արթնություն** – – **անձնական, ընտանեկան, համայնք և պետություն...***

3. ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՆՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՆՑ ԱԶԱՏՎԵԼ ՀՈԳԵՈՐ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ:

*Մարկոս 9:28-29 – Եվ երբ նա տուն մտավ, աշակերտները նրան առանձին հարցրին. Մենք ինչո՞ւ չկարողացանք հանել նրան: Եվ նա ասաց նրանց. Այդ դիվային սերնդին ոչ ոք այլ կերպ չի կարող դուրս հանել, եթե ոչ **աղոթքով** ու **ծոմով**:*

4. ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՆՈՒՄ Է ՀԵՏ ՄՂԵԼ ԿԱՄ ԹՈՒԼԱՑՆԵԼ ԴԻՎԱՅԻՆ ՈՒԺԵՐԸ:

- ***Երբ ծոմ եք պահում, դուք մաքրում եք ձեր միտքը և ավելի խորանում Աստծո մեջ:***

Ծոմ և աղոթք.

*Դանիել 10:2-3 – **2** Այն օրերին ես՝ Դանիելս, սգի մեջ էի երեք յոթնյակ օրեր: **3** Ախորժելի կերակուր չկերա, և միս ու գինի չմտավ բերանս, և բոլորովին յուղով չօծվեցի, մինչև որ երեք յոթնյակ օրերը չլրացան:*

Տիրոջ պատասխանը.

*Դանիել 10:9 – **9** Եվ ես լսեցի նրա խոսքերի ձայնը: Եվ երբ նրա խոսքերի ձայնը լսեցի, թմբիրի մեջ ընկա երեսիս վրա, և երեսս գետնին էր: Եվ նա ինձ ասաց.*

*Դանիել 10:12 – **12** Մի՛ վախեցիր, ո՛վ Դանիել, որովհետև այն առաջին օրից, երբ մտադրվեցիր ըմբռնել և քո անձը քո Աստծու առաջ խոնարհեցրիր, քո խոսքերը լսվել են, և ես եկել եմ քո խոսքերի պատճառով:*

- ***Ծոմապահությունն արձակում է Աստծո գերբնական զորությունը:***

*Դանիել 10:18-19 – **18** Եվ մարդու կերպարանք ունեցողը կրկին դիպավ ինձ և ինձ զորացրեց: **19** Եվ ասաց. Մի՛ վախեցիր, ո՛վ սիրելի մարդ, խաղաղությո՛ւն քեզ, զորացի՛ր, քաջասի՛րտ եղիրե: Եվ երբ նա խոսեց ինձ հետ, ես զորացա և ասացի. Թող տերս խոսի, որովհետև ինձ զորացրել ես:*

Ծոմ և աղոթք.

*Եզրաս 8:21 – **21** Եվ ես այնտեղ՝ Ահավայի գետի մոտ, ծոմապահություն քարոզեցի մեր Աստծու առջև խոնարհվելու համար, որ նրանից հաջող ճանապարհորդություն խնդրենք մեզ և մեր ընտանիքի և մեր ամբողջ ունեցվածքի համար:*

Տիրոջ պատասխանը.

***23** Մենք ծոմ պահեցինք և այս մասին խնդրեցինք մեր Աստծուն, և նա ընդունեց մեր խնդրանքը:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ